

**ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ  
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**ՅԵՐԲԱՂԲՆԱԿԿՈՈՊ ՄԻՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

---

**ՅԵՐԵՎԱՆ 1 9 3 7**

334.1

4

ՄՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

# ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

A 3891 / 84



ՅԵՐԳՍՂԲՆԱԿԿՈՊ ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1 9 8 7

34

Յերևան, Գեորգիայի տպարան

---

Գրազիտի լիազոր № 62010. Գառփեր 601. Տիրաժ 500

# ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱ- ՐԱՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն

## 1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սոցիալիզմի հաղթական շինարարությունը խորհրդային յերկրում ապահովել է բանվորների և աշխատավոր մասսաների բարորության աճումը:

1 Աշխատավորների բնակարանային պայմանները ել ավելի բարելավելու, նրանց կենցաղը սոցիալատական հիմունքներով վերակառուցելու, նոր բնակարանային շինարարության մեջ աշխատավորների ինքնապորժուկները, հասարակական նախաձեռնությունն ու միջոցները ներգրավելու նպատակով կազմակերպվում է բանվորական բնակարանային շինարարական կոոպերատիվ:

..... անունով:

2. .... բնակչինկոոպը սպասարկում է աշխատավորներին: Կոոպերատիվի վարչությունը գտնվում է Յերևան քաղաքում:

3. Կոոպերատիվը նրա կանոնադրությունը բնակարանային կոոպերացիայի Միության մեջ տոմարագրելուց հետո, ոգտվում է իրավական անձի բոլոր իրավունքներով: Մասնավորապես կոոպերատիվն իրավունք ունի.

ա) Ստանալ հողամասեր կառուցման կամ ընդմիջտ ոգտագործելու իրավունքով:

բ) Կառուցել նոր շենքեր, կամ կցվող շենքեր, վերականգնել քանդված շենքերը և ավելացնել նոր հարկեր

գ) Ստանալ տեղական խորհուրդներից, ձեռնարկություններից ու կազմակերպություններից ի սեփականութուն կոոպերատիվի թե բնակիչներ ունեցող և թե ազատ բնակելի շենքեր, ձեռք բերել շենքեր՝ քանդելու իր հողամասն ընդարձակելու նպատակով:

դ) Ոգտվել իրեն պատկանող տների ամբողջ բնակելի մակերեսից՝ անդամներին հատկացնելու նպատակով, ինչպես նաև վոչ բնակելի տարածությունից, սեփական կարիքների համար կամ պետական, հասարակական ու կոոպերատիվային կազմակերպություններին տրամադրելու համար:

ե) Վարկեր ստանալ կոմունալ բանկից ի հաշիվ տեղական խորհուրդների, արդյունաբերական ձեռնարկությունների ու կազմակերպությունների, յեթե վերջիններն ըստ որենքի կաբող են այդպեսի վարկեր տրամադրել այդ նպատակների համար:

զ) Ձեռք բերել և պատրաստել թե կոոպերատիվի և թե նրա անդամների համար շինանյութեր, շինարարական մեխանիզմներ, տնային և բնակարանային սարքավորում և այլն:

ե) Կազմակերպել, ձեռք բերել ի սեփականություն կամ վարձել ոժանդակ ձեռնարկություններ կոոպերատիվ կամ նրա անդամների կարիքների համար անհրաժեշտ շինանյութեր, շինվածքի մասեր և ուրիշ իրեր արտադրելու կամ վերամշակելու նպատակով:

ը) Կնքել կոոպերատիվի նպատակներին համապատասխանող տնտեսական և այլ պայմանագրեր:

թ) Սեփական կայքը վորոշ հատուցումներով տալ այլ ընակ-շինարարական կոոպերատիվներին, պետական, կոոպերատիվային, կամ հասարակական կազմակերպություններին:

ժ) Անդամների և նրանց ընտանիքների կարիքների համար կազմակերպել հասարակական սնունդ, մսուր, լվացքատուն, մանկապարտեզ, մանկական հրապարակ, կարմիր անկյուն և կուլտ-կենցաղային ուրիշ հաստատություններ, նույնպես և մերձքաղաքային և ամառանոցային տնտեսություններ:

4. Կոոպերատիվն ունի կնիք, վորի վրա նշանակված ե իր անունը:

5. Իր ապրանքների և պարտավորումների համար կոոպերատիվը պատասխանատու չե իր ամբողջ գույքով, այդ թվում նաև իր փայտվճարներից գոյացած կապիտալով ( \_\_\_\_\_ )

Բացի դրանից, կոոպերատիվի անդամները կոոպերատիվի պարտավորությունների դիմաց լրացուցիչ պատասխանատվություն են կրում իրենց անդամակցական փաշի հնգապատիկ չափով:

## 2. ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՓԱՅԵՐԻ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

6. Կոոպերատիվի անդամ կարող են ընդունվել, բացի Հ.Պ.Ս.Հ. սահմանադրութեամբ ընտրական իրավունքից զրկվածներից, բոլոր աշխատավորները:

ա) Բանվորներն ու ծառայողները:

բ) Նրանք, ովքեր վարձու աշխատող չեն, բայց ոգտվում են բանվորի ու ծառայողի իրավունքներից (գրողներ, թոշակառուներ, աշխատանքի ինվալիդներ և այլն):

գ) Զինվորականները:

դ) Գյուղատնտեսական արտելների (կոլտնտեսութունների), հանքագործ ու շինարարական արտելների անդամները և ընդհանուր արհեստանոցներում աշխատողները:

Առանձին ձեռնարկութեան կամ ժողովրդական տնտեսութեան վորևէ ճյուղի սպասարկող կոոպերատիվի անդամ ընդունվում են այդ ձեռնարկութեան կամ կազմակերպութեան աշխատողները միայն:

7. Կոոպերատիվի անդամի ընդունելութունը կատարում է վարչութունը, վորը նոր ընդունված անդամների ցուցակը ներկայացնում է մոտակա ընդհանուր ժողովի հաստատութեանը:

Ընդհանուր ժողովի վորոշումով նոր անդամների ընդունելութունը կարող է սահմանափակվել կամ բոլորովին դադարեցվել, նայած կոոպերատիվի շինարարական պլաններին, միայն թե այդ վորոշումը պետք է հաստատվի ընակարանային կոոպերացիայի միութեան կողմից:

8. Կոոպերատիվի անդամները չեն կարող միա-  
ժամանակ անդամ լինել այլ բնակ-շինարարական  
կոոպերատիվի:

9. Կոոպերատիվի ամեն մի նոր անդամ պետք է  
մուծի մուտքի վճար 10 ուրբ., վորը չենթակա չե  
վերադարձման, և անդամակցական փայ—բնակկո-  
ոպերացիայի տնտեսական գործունեյությունը ուժե-  
ղացնելու համար այն չափով և այն ժամկետին, վո-  
րոնք վորոշվում են բնակկոոպմիության հրահանգով:

10. Բացի մուտքի վճարից և անդամակցական փա-  
յից, կոոպերատիվի անդամը բնակելի տարածություն  
ստանալու համար պարտավոր է մուծել շինարարա-  
կան փայ, վորը հավասար է նրան տրվող բնակտա-  
րածության լրիվ արժեքին:

Շինարարական փայը վճարվում է հետևյալ կարգով.  
ա. Նրա մի մասը— շենքի շինարարական արժեքի  
մինչև 15 % -ը վճարվում է կոոպերատիվային շենքը  
մտնելուց առաջ: Փայի այդ մասի գումարը և նրա  
լրացնելու ժամկետները վորոշում է կոոպերատիվի վար-  
չությունը համաձայն գոյություն ունեցող որենք-  
ների և կենտրանկմիության դիրեկտիվների:

բ) Մնացած մասը կոոպերատիվի անդամը վճա-  
րում է յերկարատե ժամանակում, մարելով բանկի այն  
փոխառությունը, վորի հաշվով շինված է շենքը:

Կոոպերատիվից դուրս գալու դեպքում անդամին  
վերադարձվում են, նրա անդամակցական ու շինա-  
րարական փայերը այս կանոնադրության 32 կետում  
ցույց տված կարգով:

11. Կոոպերատիվի անդամների փայերը յենթակա  
չեն բռնադանձման նրանց անձնական պարտքերի և



պարտավորությունները, ինչպես նաև դատական կամ վարչական պահանջների դիմաց:

12. Կոոպերատիվի անդամն իր շինարարական փայլ կարող և մուծել դրամով, կամ կոոպերատիվի վարչության հետ համաձայնության գալով կարող և լրացնել անձնական աշխատանքով կամ կառուցումով: Կոոպերատիվի անդամից շինարարական փայլի փոխարեն կառուցում ընդունելը կատարվում և ամեն մի առանձին դեպքում բնակկոոպ Միության հավանությամբ:

Կոոպերատիվը պարտավոր և ամեն կերպ քաջալերել անդամների անձնական աշխատանքի կիրառումը շինարարության մեջ և կոոպերատիվի մերձաքաղաքային ու ամառանոցային տնտեսության մեջ:

### 3. ԲՆԱԿՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ

13. Կոոպերատիվի անդամն իրավունք ունի բնակատարածություն ստանալու սույն կանոնադրության 10 հոդ. ա. կետ. նշած շինարարական փայլը վճարելուց հետո միայն:

Այդ փայլը լիովին վճարելու պահից միայն նա հերթի է գրվում բնակատարածություն ստանալու համար:

14. Շինարարական մինչմուտքային մասը վճարած և հերթի գրված (§ 13) անդամները միջև բնակելի տարածության բաշխումը կատարում և կոոպերատիվի վարչությունը՝ ընդհանուր ժողովի վերջնական համաձայնությամբ:

Ընդհանուր ժողովն ու կոոպերատիվի վարչու-

Թյունը շենքերը բաշխելու մասին վորոշում են հանում նկատի առնելով, թե կոոպերատիվի ամեն մի անդամն ինչքան ժամանակ է սպասել բնակատարածությունն ստանալուն (ոգտակար ստաժը): Սպասումների հավասար ժամանակների դեպքում առաջին հերթին բնակարան է տրվում կոոպերատիվի անդամներին, վորոնք հարվածային են, ստախանովական են, կամ աչքի ընկնող ծառայություն են արել սոցիալիստական հայրենիքին:

15. Բնակատարածության բաշխման ցուցակը կոոպերատիվը կազմում է նախապես, յերբ շինվող շենքը պատրաստ է 65<sup>0</sup>/<sub>0</sub>-ով:

Բնակարան ստացողների ցուցակը վարչության և ընդհանուր ժողովի կողմից քննության առնելուց ու հաստատելուց հետո, ներկայացվում է Բնակկոոպմիությանը վերջնական հաստատման:

16. Այն բնակատարածությունը, վորը շինված է ըստ տնտեսական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի և նրանց միջոցներով, բաշխվում է դործող որենսդրության ցույց տված կարգով և կոոպերատիվի ու այդ կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի համաձայն:

Բնակարան ստացած այդ անձինք առանց բացառության պարտավոր են մուծել կոոպերատիվ բնակատարածությունից ոգտվելու հետ կապված թե շահագործման ծախսերը և թե բնակատարածության շինարարական արժեքավճարները:

#### 4. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒՅՅՈՒՆՆԵՐԸ

17. Կոոպերատիվի անդամները կոոպերատիվային բնակտարածությունն ստանում են ի մշտական ոգտագործումն:

Ամբողջ բնակտարածությունից կամ նրա մի մասից զրկելը, առանց նրա համաձայնութան, թույլատրվում է այս վանոնադրությամբ նախատեսված դեպքում միայն:

18. Կոոպերատիվից բնակարան ստացած անդամները պատասխանատու յեն իրենց հանձնված բնակտարածության անվնաս պահպանման համար և պարտավոր են խնամքով վերաբերվել իրենց զբաղեցրած շենքին, մաքուր պահել ու պահպանել բնակարանային և տնային սարքավորումը, ինչպես նաև ժամանակին կատարել անհետաձգելի վերանորոգումը, վորը բնակիչների իրենց պարտականությունն է:

19. Ամեն մի առանձին փայտիրոջ շենքը տրվում է հատուկ արձանագրությամբ, վորի մեջ նշանակվում է բնակարանի դրությունն ու նրա մեջ գտնվող սարքավորումը:

Տնից հեռանալու դեպքում, կոոպերատիվի անդամը պարտավոր է բնակտարածությունը հանձնել կոոպերատիվին կանոնավոր վիճակում, համաձայն ներսմանելու ժամանակ կազմված արձանագրության: Բնակվողի հանցանքով սարքավորման մեջ վորևէ վնասվածք պատահելու դեպքում, նա պարտավոր է վճարել կոոպերատիվին իր պատճառած նյութական ամբողջ վնասը:

20. Կոոպերատիվի այն անդամները, վորոնք շենք են ստացել, բացի շինարարական փայլի վճարումներից (§ 10) վճարում են նաև բանկային վարկերի հետ կապված 0/0-ը և մասնակցում են բոլոր այն ծախսերին, վորոնք կապված են տնտեսության շահագործման հետ (վարչական, վերանորոգման, շենքի վայելուչ վիճակում պահելու և սրյլ ծախսերին, ըստ իրենց զբաղեցրած բնակարանի տարածության չափի):

21. Կոոպերատիվի անդամներն իրավունք չունեն, բացի պաշտոնական գործուղման մեկնածուներից, վարձով տալու իրենց ամբողջ բնակտարածությունը կամ նրա մի մասը:

Վերջիններս իրենց բնակտարածությունը կարող են վարձով տալ իրենց գործուղման ժամկետով կոոպերատիվի վարչության կողմից հաստատված առանձին պայմանագրով:

22. Կոոպերատիվի անդամի մահվան դեպքում նրա կատարած փայական մուծումներն որինական ժառանգման կարգով կամ կտակով անցնում են նրա ժառանգներին: Իսկ բնակարանից ոգտվելու իրավունքը տրվում է մեռածի ընտանիքի այն անդամներին, (ամուսին, զավակներ, ծնողներ, խնամքի տակ գտնվողներ), վորոնք ապրում եյին մեռածի հետ և Հ.Ս.Ս.Հ. Սահմանադրությամբ ընտրական իրավունքից զրկված չեն: Մեռածի ընտանիքի այս վերջին անդամներին նույնպես իրավունք է վերապահվում բնակտարածություն ստանալու, չեթե մեռածը մինչև իր մահը բնակարան չի ստացել:

Ընտանիքի այդ անդամները պարտավոր են 6

ամսվա ընթացքում ձեւակերպել իրենց անդամությունը, կոոպերատիվային շենքից ոգավելու իրենց իրավունքը և փայական մուծումները, նույնպես կարգավորել մյուս ժառանգների հետ այն բոլոր հաշիվները, վորոնք կապված են մեռածի փայական մուծումների հետ:

Նրանց կողմից այդ ժամկետում իրենց փոխհարաբերությունները կոոպերատիվի հետ ձեւակերպելու դեպքում, մեռած անդամի բնակտարածությունը անցնում է կոոպերատիվին, իսկ յեթե նշված ժամկետին ժառանգները չեն երկայանան կամ հայտ չեն երկայացնեն, կոոպերատիվին են անցնում մեռածի նաև փայական մուծումները:

23. Կոոպերատիվի անդամը վարչության համաձայնությամբ իրավունք ունի այս կանոնադրության § 6-ում (գլ. 2) հիշված անձերից վորեւէ մեկի հետ փոխանակել իր բնակարանը: Փոխանակման կարգով ներս յեկող անձը պետք է անդամադրվի կոոպերատիվին: Հեռացող անդամի հայտարարությամբ ներս մտնողին են փոխանցվում հեռացողին փայերն ու բոլոր պարտավորությունները, կոոպերատիվի հետ ունենալիք հաշիվների նկատմամբ:

24. Կոոպերատիվի բոլոր անդամները պարտավոր են յենթարկվել կանոնադրության պահանջներին, ընդհանուր ժողովի և վարչության վորոշումներին, ահաիվ մասնակցություն ունենալ կոոպերատիվի աշխատանքին և կատարել իրենց վրա դրվող հասարակական աշխատանքները:

25. Կոոպերատիվի ամեն մի անդամ իրավունք ունի դուրս գալ կոոպերատիվի անդամների կազմից.

այդ մասին նա հայտարարութիւնն և տալիս վարչութեան:

Կամովին դուրս գալու դեպքում կոոպերատիվի անդամն իրավունք ունի իր փաշակուտակումն ու բնակատարածութիւնը տալ իր ընտանիքի անդամներից մեկին (ծնողներին, յերեխաներին, ամուսնուն, լիովին խնամքի տակ գտնվողներին), և կոոպերատիվը պարտավոր և այդ անձին ընդունել կոոպերատիվի անդամ:

Փայի և բնակատարածութեան փոխանցումը հնարավոր և միայն այն դեպքում, յեթե ընտանիքի այդ անդամներն ոգտվում են ընտրական իրավունքներից և ապրում են փայատիրոջ հետ միասին:

26. Կոոպերատիվի այն անդամները, վորոնք Հ.Ս.Ս.Հ. Սահմանադրութեան հիման վրա զրկվել են ընտրական իրավունքներից, կոոպերատիվի կազմից հեռացվում են վարչութեան վորոշմամբ:

27. Կոոպերատիվի այն անդամները, վորոնք չեն յենթարկվում կանոնադրութեան, չեն կատարում դեպի կոոպերատիվն ունեցած իրենց պարտականութիւնները, 3 ամիս անընդհատ չեն վճարել իրենց փաշական և այլ մուծումները, անտնտեսվար ու անփույթ են վերաբերվում դեպի բնակարանն ու կոոպերատիվային գույքը, հեռացվում են կոոպերատիվի կազմից վարչութեան վորոշմամբ և ընդհանուր ժողովի հաստատութեամբ:

28. Կոոպերատիվի այն անդամները, վորոնք հեռացել կամ հեռացվել են կոոպերատիվի կազմից, կորցնում են կոոպերատիվի բնակատարածութիւնից ոգտվելու իրավունքը:

29. Յեթե անդամը, կոոպերատիվի կազմից դուրս ե արվում ընտրական իրավունքները կորցնելու հետևանքով (§ 26) կամ հեռացվում է (§ 27), նրա ընտանիքի իրավունքը վայելող և հեռացվողի հետ միասին ապրող անդամներն, ընդհանուր ժողովի համաձայնությամբ կարող են անդամագրվել կոոպերատիվին, ստանալ հեռացող անդամի բնակտարածության համապատասխան մասն աչն պայմանով, վոր հեռացվողն իր փայական մուծումները փոխանցի այս նոր անդամին (§ 9 և 10):

30. Յեթե կոոպերատիվի անդամը ժամանակին չի մուծում հասանելիք վճարները, վճարած գումարի համար ավելացվում է տույժ Բնակմիության առանձին հրահանգով նախատեսնված չափով:

Չարաշահ չվճարողները կարող են հեռացվել կոոպերատիվի անդամների կազմից և դատական կարգով վտարվել բնակարանից:

31. Կոոպերատիվի անդամների կազմից հեռացածը կամ հեռացվածը պատասխանատու չե կոոպերատիվի պարտքերի համար իր դուրս գալուն նախորդած մի տարի ժամանակի համար:

Նոր ընդունվող անդամները պատասխանատվութուն են կրում կոոպերատիվի այն պարտքերի համար, վոր նա ունի մինչև նոր անդամների ընդունվելը:

32. Կոոպերատիվի անդամների կազմից հեռանալու կամ հեռացվելու դեպքում, հեռացողին վերադարձվում են նրա մուծած փայական մուծումները, հանելով այն գումարը, վորը կազմում է նրա ոգտագործած բնակտարածությանը բաժին ընկնող ամորտիզացիայից (բնակված ամբողջ ժամանակամի-

Ջոցի համար) և նրան բաժին ընկնող վնասներից:  
Փայակուտակման վերադարձումը կատարվում է (բացի այն դեպքից, յերբ տեղի չեն ունեցել §22 և 23-ում նշված դեպքերը) տնտեսական տարվա վերջում տարեկան հաշվեկշիռը հաստատվելուց հետո:

33. Յեթե հեռացող կամ հեռացվող անդամը 3 տարվա ընթացքում չստանա իր փայավճարները, նրանք փոխանցվում են կոոպերատիվի հիմնական կապիտալին:

34. Յեթե կոոպերատիվի անդամը տեղափոխվում է (մորիլիզացիա, փոխադրում և այլն) մի ուրիշ տեղ աշխատելու կամ սովորելու, կոոպերատիվը պարտավոր է այդ անդամի պահանջով վոչ ուշ քան յերեք ամսվա ընթացքում նրա փայական մուծումները տեղափոխել այն կոոպերատիվին, ուր հեռացած անդամն ընդունվել է ըստ իր նոր աշխատանքի վայրի:

Նոր կոոպերատիվում այդ անդամը պահպանում է հին կոոպերատիվում ունեցած ոչտակար ստաժը:

## ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

35. Կոոպերատիվի դրամադրուլեխները կազմում են՝ ա) հիմնական, բ) շրջանառու, գ) շինարարական, և դ) հատուկ կապիտալներին:

36. Հիմնական կապիտալը կազմում է՝ ա) մուտքի վճարներից, բ) կուտակումներից կատարվող մասհանումներից ընդհանուր ժողովի վորոշած չափով, գ) այլ պատահական յեկամուտներից:



Հիմնական կապիտալը հատկացվում է գույք ձեռք  
քերելու, նաև վնասները ծածկելու համար:

37. Շրջանառու կապիտալը կազմում է անդամ-  
ներից ստացվող անդամակցական փայերից:

Կոոպերատիվի փայական կապիտալը հատկացվում  
է նրա ընթացիկ ոպերացիաների կատարմանը:

Կոոպերատիվը պարտավոր է շրջանառու կապի-  
տալի գումարների մի մասը, բնակամիության վորո-  
շած չափով, փոխադրել բնակարանային կոոպերացիա-  
յի միության, նրա տնտեսական գործունեյությունը  
ընդարձակելու նպատակով:

38. Շինարարական կապիտալը կազմում է ան-  
դամներից ստացվող շինարարական փայերից:

Շինարարական կապիտալը ծախսվում է բնակելի  
տներ կառուցելու և շինարարության համար ստա-  
ցած փոխառությունները հանգցնելու վրա:

39. Հատուկ գումարները կազմվում են բնակկոոպ-  
միության կամ ընդհանուր ժողովի վորոշմամբ ան-  
դամների իրենց նախաձեռնությամբ կոոպերատիվի  
տնտեսական, կուլտ-կենցաղային և այլ կարիքները  
բավարարելու համար:

Ընդհանուր ժողովի՝ հատուկ կապիտալներ գոյաց-  
նելու մասին կայացած վորոշումը 10 որվա ընթաց-  
քում պետք է ներկայացնել Բնակկոոպմիությանն  
ի տեղեկություն:

Այս կապիտալների ծախսելու կարգը վորոշում է  
ընդհանուր ժողովը:

## ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

40. Կոոպերատիվի գործերը կառավարում են ընդհանուր ժողովն ու վարչութիւնը:

Յեթե ընդհանուր ժողով հրավիրելը կոոպերատիվի անդամների շատութեան պատճառով դժվարութիւնների յե հանդիպում, ընդհանուր ժողովը փոխարինվում է լիազորների ժողովով: Լիազորների թիվը վորոշվում է բնակավայրի վորոշված նորմաներով:


41. Ընդհանուր ժողովը կոոպերատիվի կառավարման բարձրագույն որգանն է: Նա յի լուծում կոոպերատիվի գործունեյութեան ամենակարևոր հարցերը, ընտրում է վարչութիւնն և վերստուգիչ հանձնաժողով և հաստատվում է հրահանգ նրանց աշխատանքի մասին:

184.  
Հերթական ընդհանուր ժողովներ հրավիրվում են վոչ պակաս քան տարին յերկու անգամ: Արտակարգ ընդհանուր ժողովները հրավիրվում են կոոպերատիվի բոլոր անդամների 1/10-ի կամ վերստուգիչ հանձնաժողովի պահանջով:

Ընդհանուր ժողովն որինական է, յերբ ներկային բոլոր անդամների 60 0/0-ից վոչ պակասը: Յեթե ընդհանուր ժողովը չի կայանում անդամների անհրաժեշտ թվի պակասութեան պատճառով, կարող է հրավիրվել յերկրորդ ընդհանուր ժողով նույն որակարգով: Այդ յերկրորդ ժողովը կհամարվի որինական քանի անգամ էլ ներկայ լինել:

42. Ընդհանուր ժողովը քննում է.

ա) Անդամի կոոպերատիվից հեռացնելու



A 3891

բ) Ընդհանուր ժողովը լիազորական ժողովով փոխարինելու,

գ) Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամներին ժամանակից շուտ հեռացնելու և

դ) Կոոպերատիվի լուծարքի հարցերը: Վերջին հարցը լուծելու համար պահանջվում է ներկա գտնվող անդամների 2/3 մեծամասնությունը:

Ընդհանուր ժողովի վորոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ:

43. Կոոպերատիվ վարչությունն ընտրվում է մի տարով 3—5 անդամից: Վարչությունը կոոպերատիվի գործադիր մարմինն է և վարում է նրա բոլոր գործերը:

Վարչությունը բաշխում է իր անդամների միջև շինարարությունն ու տնտեսությունն ղեկավարելու պարտականությունները, վարչության այս կամ այն անդամի վրա դնում է լրիվ պատասխանատվություն նրա ստանձնած գործի համար, տալով նրանց դրա համար անհրաժեշտ իրավունքները:

44. Գույքաչին պարտավորություններն ու կոոպերատիվի համար գումարներ ստանալու պահանջները պետք է ստորագրեն վարչության նախագահը (կամ նրա լիազորությամբ վարչության անդամը) և հաշվապահը:

Վարչությունը պարտավոր է հաշվապահությունը տանել Բնակմիության հաստատված ձևով ու կանոններով:

45. Վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է 3—5 հոգուց, նա ստուգում է վարչության գործունեյությունը, մասնավորապես կանոնադրության կիրա-

առումը, շինարարական և բնակֆինսյականների կազմումը: Ստուգում է գանձարկղը, գույքը, փաստաթղթերը ու հաշվետվությունը, տալիս է իր յեզրակացությունը տարեկան հաշվետվության ու հաշվեկշռի մասին և հաշվետու յե լինում ընդհանուր ժողովի առաջ իր գործունեյության համար:

46. Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ չեն կարող միաժամանակ մտնել միևնույն ընտանիքին պատկանող անձերը:

47. Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամները համապարտորեն պատասխանատու չեն այն ըստը վնասների համար, վոր պատճառել են կոոպերատիվին իրենց անկանոն գործողություններով:

Վարչությունն իրավունք չունի կատարել վորևէ կաղմակերպության կամ հաստատության կարգադրությունը, վորը վերաբերվում է կոոպերատիվի բնակտարածության հաշվառմանը, բաշխմանը կամ բնակեցմանը և խախտում է սուլն կանոնադրությունը:

Այդպիսի կարգադրությունները կատարելու համար վարչությունն ու կոոպերատիվի պաշտոնակատար անձինք յենթակա յեն քրեական պատասխանատվության:

48. Վորպեսզի ազգաբնակությունը լիովին ներգրավի կոոպերատիվային տնտեսության մեջ և շինած ու բնակեցրած տների կառավարման գործում, վարչության վորոշմամբ կարող են կաղմակերպվել ընտրովի տնային վարչություններ, վորոնք լիովին պատասխանատու յեն բնակելի ֆոնդի շահագործման, վերանորոգման և անվնաս պահպանության համար:

Այդ վարչությունները պիտի գործեն տնտեսաշ-  
վարկի սկզբունքներով: Ընտրովի տնային վարչու-  
թյունների կազմակերպման ու գործունեյության  
կարգը, նաև նրանց ու կոոպերատիվի փոխհարաբե-  
րությունները վորոշվում են Բնակմիության հրա-  
տարակաժ առանձին կանոնադրությամբ:

## ՓՈՒՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՆԱԿՎՈՐՄՄՄՈՒԹՅԱՆ ՇԵՏ

49. Կոոպերատիվը Վորպես անդամ մտնում է  
բնակարանային կոոպերացիայի .....

..... միության մեջ և իր աշ-  
խատանքը տանում է նրա անմիջական ղեկավա-  
րությամբ:

Բնակմիության ղիրեկտիվները ու վորոշումները  
պարտադիր են կոոպերատիվի համար:

Բնակմիությունը, մասնավորապես, իրավունք  
ունի կանոնավորել բանվորական—շինարարական  
կոոպերատիվների աճումը և նոր անդամների ըն-  
դունելությունը նրանց մեջ:

## ԿՈՐՄԵՐԱՏԻՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՔԸ

50. Կոոպերատիվը դադարեցնում է իր գործունե-  
յությունը հետևյալ դեպքերում.

ա) Յերբ կոոպերատիվի անդամների թիվը ավելի  
պակաս է, քան որենքով վորոշված նորման:

բ) Յերբ դատական որգանի վորոշմամբ կոոպե-  
րատիվը ճանաչվում է սնանկ:

դ) Յերբ տվյալ կոոպերատիվը կճանաչի կանոնադրության մեջ նշված նպատակից շեղված կամ պետական շահերին հակառակ գործող:

դ) Յերբ Բնակկոոպմիությունը տվյալ կոոպերատիվը կճանաչի վորպես կեղծ կոոպերապիվ կամ տնտեսական վոչ կենսունակ կազմակերպություն:

յե) Յեթե կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովն անհրաժեշտ կգտնի լուծարքել այդ կոոպերատիվը:

Կոոպերատիվի գործերի լուծարքը կատարվում է գործող այն որենքների հիման վրա, վորոնք սահմանում են կոոպերատիվային կազմակերպությունների զարգացման կարգը նրանց լուծարքի դեպքում:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038855

(044)  
ጥላይ 1 ስ

233

A  $\frac{1}{3891}$